Հաստատված է
«Քվանտ» ՈՒԳԱԿ-ի
ընդհանուր ժողովում
Ռ. Վարդանյան
31.05.2014թ.

Ժողովի նախագահ

«ՔՎԱՆՏ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրություն)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Քվանտ» վարժարանը ՀՀ ոչ պետական (վճարովի) հանրակրթական ուսումնական հաստատություն է, որն իրականացնում է հանրակրթական ընդհանուր, այդ թվում՝ հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցմամբ հանրակրթական տարրական, հիմնական, միջնակարգ, ինչպես նաև հեղինակային և միջազգային ծրագրեր: «Քվանտ» վարժարանը «Քվանտ» ուսումնագիտական կոոպերատիվի (այսուհետ՝ հիմնադիր) ստորաբաժանումն է:
2. «Քվանտ» վարժարանը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:
3. «Քվանտ» վարժարանը գտնվում է ք. Երևան, Բագրատունյաց 23/2 հասցեում, ունի հետազոտական կենտրոն՝ Բագրատունյաց 25/27 հասցեում, և ամառային ուսումնամարզական ճամբար՝ Կոտայքի մարզի Աղավնաձոր գյուղի վարչական տարածքում:
4. «Քվանտ» վարժարանին շինությունները և գույքը հիմնադրի կողմից տրամադրված են անվարձահատույց օգտագործման իրավունքով:
5. «Քվանտ» վարժարանն ունի կլոր կնիք, որն օգտագործվում է ուսումնական գործընթացին վերաբերող փաստաթղթերի՝ տեղեկանքների, վկայականների, ատեստատների և այլ փաստաթղթերի հաստատման համար: Ունի իր անվամբ ձևաթղթեր (3 լեզուներով), խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:
6. «Քվանտ» վարժարանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների հետ:
7. Վարժարանի ֆինանսական միջոցները գոյանում են սովորողների ուսման վարձերից, տարբեր աշխատանքների և ծառայությունների վարձատրությունից, նպատակային և անհատույց նվիրատվություններից, հիմնադրի կողմից կատարված ներդրումներից:
8. «Քվանտ» վարժարանում արգելվում է իրականացնել քաղաքական գործունեություն կամ քարոզչություն: Կրոնական գործունեությունը և քարոզչությունը արգելվում են՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

II. «ՔՎԱՆՏ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

9. «Քվանտ» վարժարանի գործունեության առարկան հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան հանրակրթական հիմնական, ինչպես նաև պետական չափորոշչի պահանջներին չհակասող միջազգային կրթական ծրագրերի իրականացումն է:
10. «Քվանտ» վարժարանի գործունեության նպատակն է ապահովել սովորողների կողմից հանրակրթության պետական չափորոշչի և համապատասխան ծրագրերի առնվազն

նվազագույն պահանջների բավարարումը, սովորողների բազմակողմանի զարգացումը, նրանց առողջության պահպանումը, ինչպես նաև նրանց համար ինքնակրթության և լրացուցիչ կրթության պահանջմունքների պայմանների ստեղծումը:
11. «Քվանտ» վարժարանի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, թափանցիկության, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի պահպանման, ինչպես նաև ազգային և համամարդկային արժեքների զուգորդման սկզբունքների վրա:
12. «Քվանտ» վարժարանը պատասխանատու է հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան իրականացվող հանրակրթական ծրագրերի, սովորողների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան կրթության բովանդակության ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:
13. «Քվանտ» վարժարանի կողմից հանրակրթություն իրականացնելիս հանրակրթական հիմնական և միջազգային ծրագրերը ներառում են՝
1) ուսումնամեթոդական, փորձարարական հետազոտական աշխատանքներ,
2)մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումներ,
3) սովորողների համար հանրակրթական լրացուցիչ դասընթացների կազմակերպում,
4) սովորողների առողջության պահպանման միջոցառումներ,
5) սովորողների սննդի կազմակերպում,
6) սովորողների տրանսպորտային կազմակերպված փոխադրումներ,
7) սովորողների երկարօրյա ուսուցման և (կամ) գիշերակացի կազմակերպում,
8) ուսումնադաստիարակչական բազաներում, մարզաառողջարարական ճամբարներում սովորողների ուսուցման, դաստիարակության ու հանգստի կազմակերպում:
14. «Քվանտ» վարժարանը կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն՝ հիմնադրի համաձայնությամբ:
15. «Քվանտ» վարժարանը սահմանում է յուրաքանչյուր աշակերտի ուսումնական տարվա վարձաչափ՝ կախված դասարանից, հոսքից, աշակերտի առաջադիմությունից, նրա ընտանիքի սոցիալական վիճակից և այլ հանգամանքներից:

III. «ՔՎԱՆՏ» ՎԱՐԺԱՐԱՆՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

16. «Քվանտ» վարժարանը իրականացնում է հանրակրթական տարրական (1-4-րդ դասարաններ) , հանրակրթական հիմնական (5-9- րդ դասարաններ), միջնակարգ (10-12-րդ դասարաններ) և Միջազգային բակալավրիատի «Դիպլոմա» (International Baccalaureate Diploma) երկամյա ծրագրերը(11-12-րդ դասարաններ):
17. «Քվանտ» վարժարանում ուսուցման հիմնական լեզուն գրական հայերենն է՝ Հայաստանի Հանրապետության «Լեզվի մասին» օրենքի պահանջներին համապատասխան: Միջազգային բակալավրիատի «Դիպլոմա» ծրագրով ուսուցումը իրականացվում է նաև անգլերենով՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ համաձայն ՀՀ կառավարության 01.09.2011թ. N1335-Ա որոշման:
18. Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող սովորողների կրթությունը Միջազգային բակալավրիատ ծրագրի շրջանակներում իրականացվում է անգլերենով: Այդ սովորողների համար կազմակերպվում են հայոց պատմություն առարկայի անգլերենով դասընթացներ:
19. Վարժարանում սովորողների ընթացիկ գնահատումը կատարվում է 10-միավորանոց համակարգով: Իրականացվում է նաև սովորողների գիտելիքների ստուգում տնօրինության կողմից կազմակերպվող աշնանային և գարնանային թեմատիկ գրավոր աշխատանքների՝

ստուգարքների, կիսամյակային և տարեկան ամփոփիչ գրավոր աշխատանքների՝ քննությունների միջոցով: Քննությունների և ստուգարքների ժամանակ գնահատումը կատարվում է 20-միավորանոց համակարգով, արդյունքները բերվում են 10-միավորանոց համակարգի: Եթե առարկայի ամփոփումը կատարվում է քննության տեսքով, ապա այդ առարկայից կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանք չի անցկացվում և կիսամյակային գնահատականը ձևավորվում է առանց դրա: Այս դեպքում տարեկան գնահատականը ձևավորվում է առաջին կիսամյակի կիսամյակային, ձմեռային քննության և երկրորդ կիսամյակի կիսամյակային գնահատականների հիման վրա, իսկ վերջնական գնահատականը՝ տարեկան և ամառային քննական գնահատականներից: Միջազգային բակալավրիատի ծրագրով սովորողների գնահատումը կատարվում է Միջազգային բակալավրիատի գնահատման 7-միավորանոց համակարգով:

20. Տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ծրագրերի ավարտին իրականացվում է հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների համապատասխանության ստուգում՝ պետական ամփոփիչ ատեստավորում ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված կարգով: Միջազգային բակալավրիատի «Դիպլոմա» ծրագրով սովորողները, ովքեր ՀՀ քաղաքացի են, հանձնում են պետական ավարտական քննություններ հայագիտական (հայոց լեզու և գրականություն, հայոց պատմություն) առարկաներից և ֆիզկուլտուրայից:

21. Վարժարանի՝ ՀՀ քաղաքացի հանդիսացող շրջանավարտին, ըստ կրթության մակարդակների տրվում է հանրակրթական ծրագրերի յուրացումն հավաստող պետական ավարտական փաստաթուղթ՝ վկայական կամ ատեստատ:

22. «Քվանտ» վարժարանի Միջազգային բակալավրիատի ծրագրի՝ ՀՀ քաղաքացի հանդիսացող շրջանավարտին այդ ծրագրի համապատասխան միջազգային ավարտական փաստաթղթերից բացի տրվում է նաև ՀՀ պետական ատեստատ, որում մաթեմատիկա, բնություն և բնական գիտություններ, օտար լեզու բնագավառների առարկաների քննական գնահատականները սովորողի ցանկությամբ կարող են նշանակվել Միջազգային բակալավրիատի «Դիպլոմա» ծրագրի ավարտական քննական գնահատականների հիման վրա՝ համապատասխանաբար անցում կատարելով 7 միավորյան համակարգից 10 կամ 20 միավորյան համակարգի(համաձայն հավելված 1-ի): Իսկ տարեկան գնահատականները պետական ատեստատում նշանակվում են 10-րդ դասարանում ուսումնասիրած առարկաների գնահատականների հիման վրա:

23. «Քվանտ» վարժարանի Միջազգային բակալավրիատի ծրագրի՝ ՀՀ քաղաքացի հանդիսացող շրջանավարտը իր ցանկությամբ մաթեմատիկա, բնական գիտություններ և օտար լեզու բնագավառների առարկաներից լրացուցիչ կարող է հանձնել նաև պետական ավարտական քննություններ: Այս դեպքում պետական ատեստատում գրանցվում է Միջազգային բակալավրիատի «Դիպլոմա» ծրագրի ավարտական քննական և պետական ավարտական քննական գնահատականներից բարձրը:

24. «Քվանտ» վարժարանի Միջազգային բակալավրիատի ծրագրի՝ ՀՀ քաղաքացի հանդիսացող շրջանավարտն այդ ծրագրի ավարտական քննություններից հետո կարող է մասնակցել նաև ՀՀ պետական միասնական քննությունների երկրորդ փուլին և մասնակցել ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության մրցույթին:

25. «Քվանտ» վարժարանում ուսումնական տարին, որպես կանոն, սկսվում է սեպտեմբերի մեկին և որպես կանոն ավարտվում է տարրական պրոցում՝ հունիսի 15-ին, միջին դպրոցում՝ հունիսի վերջին կամ հուլիսի սկզբին, ավագ դպրոցում՝ հուլիսի կեսին և Միջազգային բակալավրիատի ծրագրով ուսուցման խմբերում՝ հուլիսի վերջին: Ուսուցումը կազմակերպվում է կիսամյակներով, ուսումնական շաբաթվա վեցօրյա տևողությամբ: Կիսամյակի ընթացքում տնօրինության կողմից կազմակերպվում են թեմատիկ գրավոր աշխատանքներ՝ ստուգարքներ, իսկ վերջում՝ յուրաքանչյուր առարկայից կիսամյակային ամփոփիչ աշխատանք կամ քննություն: Որպես կանոն՝ առաջին կիսամյակի քննաշրջանն ավարտվում է հունվար ամսվա վերջին, իսկ երկրորդ կիսամյակինը՝ հուլիսի սկզբին:

26. Ուսումնական տարվա ընթացքում հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան տրվում են աշնանային, ձմեռային, գարնանային և ամառային արձակուրդներ համապատասխան ստուգարքների և քննությունների ավարտից հետո: Ստուգարքների, քննությունների, վերաքննությունների և արձակուրդների ժամկետները ամեն տարվա համար սահմանում է վարժարանի գիտամանկավարժական խորհուրդը՝ համաձայնեցնելով հիմնադրի հետ:
27. Վարժարանում ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման հիմնական ձևը, որպես կանոն, դասն է: Ուսուցումը կազմակերպվում է նաև անհատական ուսուցման, անհատական կամ խմբային տարաբնույթ հետազոտական աշխատանքների կատարման, էքսկուրսիաների, արշավների, միջոցառումների, ճամբարային հավաքների անցկացման և այլ եղանակներով: Նման դեպքերում դասաժամերի թիվը որոշվում է՝ ելնելով մեկ դասի նորմատիվային՝ 45 րոպե տևողության հաշվարկով: Վարժարանում բոլոր դասարանների համար տարբեր առարկաներից անվճար գործում են օլիմպիական խմբակներ, որտեղ մեծ թվով աշակերտներ, ըստ իրենց նախասիրությունների, հնարավորություն են ստանում խորացնելու իրենց գիտելիքները: Իսկ 3-9-րդ դասարանների՝ որոշակի առարկաներից ցածր առաջադիմություն ցուցաբերող աշակերտների համար կազմակերպվում են լրացուցիչ դասընթացներ: Քննություններից առաջ, ուսպլանով նախատեսված պահուստային ժամերի հաշվին անցկավում է քննական առարկայի կրկնություն, խորհրդատվություն (կոնսուլտացիա), որոնց ընթացքում աշակերտները նախապատրաստվում են քննություններին:
28. Վարժարանի ուսումնական գործընթացի մի մասը կազմակերպվում է ճամբարում՝ ամառային դպրոցում, որտեղ իրականացվում են ՆԶՊ և այլ առարկաների դասեր: Ամառային դպրոցի և Միջազգային բակալավրիատի «Դիպլոմա» ծրագրի դասերը գրանցվում են առանձին դասամատյաններում:
Դասի տևողությունը, որպես կանոն, 45 րոպե է: Առանձին դեպքերում գիտամանկավարժական խորհրդի որոշմամբ այն կարող է փոփոխվել՝ պայմանով, որ պահպանվի ուսպլանով տվյալ առարկային հատկացված տարեկան ընդհանուր ժամաքանակը:
29. Ամեն տարի կազմակերպվող օժտված երեխաների մրցույթում հաղթողներին իրավունք է տրվում սովորելու վարժարանում անվճար կամ արտոնյալ պայմաններով: Բացի այդ՝ սոցիալապես անապահով, ուսման մեջ բարձր առաջադիմություն, հասարակական ակտիվություն ցուցաբերող աշակերտները գիտամանկավարժական խորհրդի որոշմամբ ստանում են ուսման վարձի արտոնություններ, պարգևատրումներ, նվերներ, ճամբարի անվճար ուղեգրեր և այլն:

IV. «ՔՎԱՆՏ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

30. «Քվանտ» վարժարանի կառուցվածքը, նրա կառավարման կարգը սահմանում է հիմնադիրը՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
31. Վարժարանի կառավարման մարմիններն են՝
1) հիմնադիրը,
2) գիտամանկավարժական խորհուրդը,
3) տնօրենը:
32. «Քվանտ» վարժարանի ուսումնադաստիարակչական և ֆինանսատնտեսական ընթացիկ գործունեությունը ղեկավարում է տնօրենը, որի լիազորությունները սահմանում, նրան պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում Հիմնադիրը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան: Տնօրենը իրականացնում է վարժարանի ֆինանսական խորհրդի և գիտամանկավարժական խորհրդի որոշումները՝ հիմնադրի համաձայնությամբ:

33. «Քվանտ» վարժարանում հիմնադրի սահմանած կարգով կարող են ձևավորվել խորհրդակցական մարմիններ՝ գիտամանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ՝ ամբիոններ, ծնողական, աշակերտական, հոգաբարձուների և ֆինանսական խորհուրդներ:
«Քվանտ» վարժարանում կարող են ձևավորվել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ մարմիններ:
34. «Քվանտ» վարժարանի տնօրենը ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանի, ընդունված օրենքների և Հիմնադրի որոշումների համաձայն, Կանոնադրությամբ սահմանված լիազորությունների շրջանակներում, ղեկավարում է վարժարանի ընթացիկ գործունեությունը:
35. Վարժարանի տնօրենը իրականացնում է հետևյալ լիազորությունները.
1) Օրենքով սահմանված կարգով՝ հիմնադրի համաձայնությամբ, աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում վարժարանի աշխատողներին, ինչպես նաև սահմանում է նրանց լիազորությունները:
2) Օրենքով և Կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:
3) Վերահսկողություն է իրականացնում դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, վարժարանի աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ:
4) Ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը:
5) Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար հաստատում է ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանը, վերահսկում դրա իրականացումը, հաստատում է հանրակրթական ծրագրերի ուսումնական պլանները, ապահովում է կրթական ծրագրերի իրականացումը, կրթական գործընթացի կազմակերպումը և կրում է պատասխանատվություն կրթության որակի ու բովանդակության համար: Հաստատում է ստորաբաժանումների և դասղեկների տարեկան աշխատանքային պլանները, վերահսկում դրանց իրականացումը:
6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կրում է պատասխանատվություն ներքին կարգապահական կանոնների մշակման, ներդրման, երեխաների կյանքի և առողջության պահպանման, ինչպես նաև սովորողների ու աշխատողների իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:
7) Համակարգում և հսկում է կառուցվածքային ստորաբաժանումների, մանկավարժական և այլ աշխատողների աշխատանքը ստորաբաժանման իրավասությունները:
8) Ապահովում է պետական կառավարման լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող հանձնարարականների կատարումը:
9) Ապահովում է կոլեկտիվում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումը, ինչպես նաև արդյունավետ համագործակցությունը հանրակրթության կառավարման մարմինների հետ:
10) Ապահովում է ուսումնանյութական բազայի հաշվառումը, պահպանումը, համալրումը, սանիտարահիգիենիկ ռեժիմի, աշխատանքի անվտանգությանը և սահմանված կարգով պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերի վարումը և պահպանումը:
11) Հիմնադրի սահմանած կարգով ձևավորում է «Քվանտ» վարժարանի սովորողների համակազմը, ապահովում նրանց սոցիալական պաշտպանվածությունը, իրականացնում կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

V. ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

36. Վարժարանում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ գիտամանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական, հոգաբարձուների խորհուրդներ: Վարժարանում կարող են ձևավորվել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ մարմիններ: Խորհրդակցական մարմինների ձևավորման կարգը և նրանց լիազորությունները հաստատում է հիմնադիրը:
37. Գիտամանկավարժական խորհրդի անդամներ են տնօրենը, փոխտնօրենները, ուսումնական, մեթոդական և կազմակերպչական գծով տնօրենի օգնականները, առարկայական ամբիոնների վարիչները: Գիտամանկավարժական խորհրդի նախագահի և քարտուղարի թեկնածությունը հիմնադրի հաստատմանն է ներկայացնում տնօրենը՝ խորհրդի առաջարկով, ովքեր էլ ղեկավարաում են խորհրդի աշխատանքը: Գիտամանկավարժական խորհրդի անվանական կազմը արձանագրվում է գիտամանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:
38. Գիտամանկավարժական խորհուրդը քննարկում է՝
1) հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը՝ սովորողների հակումներին ու ընդունակություններին, նրանց կյանքի և առողջության պահպանմանը համապատասխան,
2) ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ տարվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման հարցերը,
3) հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, ինչպես նաև նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները և այլ նյութեր,
4) վարժարանում կրթական գործընթացին օժանդակող խորհրդատվական (տեղեկատվական, հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, հատուկ մանկավարժական, մեթոդական, առողջապահական և այլ բնույթի) ծառայություններ մատուցելու հարցը,
5) ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցեր:
39. Գիտամանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունում՝
1) սովորողներին վերաքննություններ նշանակելու կամ տվյալ ուսումնական տարվա դասընթացը կրկնելու մասին.
2) հանրակրթական դպրոցի շրջանավարտներին, ըստ կրթական մակարդակների ավարտական փաստաթուղթ (վկայական կամ ատեստատ) տալու, գերազանցության մեդալով պարգևատրելու մասին.
3) օրենքով սահմանված կարգով սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կամ խրախուսում կիրառելու մասին.
4) վարժարանի ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցերի մասին:
40. Խորհրդի նախագահը և քարտուղարը պատասխանատու են պատշաճ ձևով նիստեր հրավիրելու և գիտամանկավարժական խորհրդի արձանագրություններ բարեխիղճ կազմելու համար: Գիտամանկավարժական խորհրդի նիստը հնարավորության դեպքում կարող է ձայնագրվել:
41. Գիտամանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ:
42. Գիտամանկավարժական խորհուրդը հրավիրում է բաց և փակ նիստեր: Վարժարանի գիտամանկավարժական խորհրդի կազմում չընդգրկված բոլոր մանկավարժները կարող են ներկա գտնվել բաց նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:
43. Անհրաժեշտության դեպքում գիտամանկավարժական խորհրդի նիստերին, խորհրդակցական ձայնի իրավունքով, հրավիրվում են ծնողներ, աշակերտական խորհրդի ներկայացուցիչներ և այլ անձինք: Գիտամանկավարժական խորհրդի նիստը իրավազոր է, եթե դրան մասնակցում են գիտամանկավարժական խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են գիտամանկավարժական խորհրդի՝

քվեարկությանը մասնակցած անդամների ձայների մեծամասնությամբ: Գիտամանկավարժական խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայնի փոխանցումն արգելվում է:
44. Գիտամանկավարժական խորհրդի որոշումների կատարումը ապահովում է վարժարանի տնօրենը:
45. Դասարանների ծնողական խորհուրդները՝ նախագահ և երկուսից չորս անդամի կազմով, ընտրվում են դասարանի ծնողների ընդհանուր ժողովի կողմից մեկ ուսումնական տարվա համար:
46. Վարժարանի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանների ծնողական խորհուրդների անդամներից՝ գիտամանկավարժական խորհրդի որոշմամբ: Ծնողական խորհրդի նախագահի թեկնածությունը գիտամանկավարժական խորհրդի հաստատմանն է ներկայացնում ծնողական խորհուրդը:
47. Աշակերտական խորհուրդը, ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան, աշակերտներին անմիջականորեն վերաբերող հարցերի մասին ազատորեն կարծիք է ներկայացնում վարժարանի գիտամանկավարժական խորհրդին:
48. Աշակերտական խորհրդի ներկայացուցիչը, խորհրդակցական ձայնի իրավունքով, մասնակցում է գիտամանկավարժական խորհրդի այն բաց նիստերին (կամ հարցերի քննարկմանը), որտեղ քննարկվում են աշակերտներին անմիջականորեն վերաբերող հարցեր:

VI. «ՔՎԱՆՏ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

49. Վարժարանում կրթական գործընթացի մասնակիցներն են՝
1) սովորողը,
2) սովորողի ծնողը,
3) ուսուցիչը և մանկավարժական այլ աշխատողներ.
4) վարչական աշխատողները:
50. Սովորողը պարտավոր է՝
1) կատարել վարժարանի Կանոնադրությամբ, կարգապահական կանոններով և ներքին իրավական այլ ակտերով սահմանված պահանջները,
2) ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների ու կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները,
3) հաճախել և մասնակցել ուսումնական պարապմունքներին, ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանով նախատեսված միջոցառումներին,
4) կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և վարժարանի ներքին իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:
51. Վարժարանը ապահովում է կրթական ծրագրի կատարման անվտանգ և ապահով պայմաններ, բնականոն աշխատանքային ռեժիմ, բժշկական օգնություն, սպասարկում համաձայն առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի, ինչպես նաեւ սովորողների ֆիզիկական զարգացման ու առողջության ամրապնդման համար անհրաժեշտ պայմաններ, ձեւավորում է անձնական հիգիենայի և առողջ ապրելակերպի հմտություններ:
52. Սովորողների առողջության պահպանման, ֆիզիկական ու մտավոր զարգացման դժվարությունները կանխարգելելու նպատակով յուրաքանչյուր սովորող տարին առնվազն մեկ անգամ անցնում է բժշկական (պրոֆիլակտիկ) հետազոտություն, որն իրականացվում է վարժարանի բժշկական սպասարկման ծառայության կամ տարածքային սպասարկման առողջապահական կազմակերպության կողմից՝ պետական բյուջեի միջոցների հաշվին:
53. Վարժարանի կարգապահությունն ապահովվում է օրենքով, Կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված կարգով:

54. վարժարանի ներքին կարգապահական կանոնները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում սովորողների նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժեր:
55. Մեկ ուսումնական տարվա ընթացքում երեք և ավելի կարգապահական տույժ ստացած սովորողը վարժարանի գիտամանկավարժական խորհրդի որոշմամբ կարող է տեղափոխվել այլ ուսումնական հաստատություն:
56. Տասնչորսից տասնութ տարեկան սովորողն ընդհանուր հիմունքներով ինքնուրույն պատասխանատվություն է կրում վարժարանին պատճառած վնասի համար: Եթե սովորողը վնասը հատուցելու համար չունի բավարար եկամուտներ կամ այլ գույք, վնասը լրիվ կամ պակասող մասով պետք է հատուցի նրա ծնողը (օրինական ներկայացուցիչը):
57. Տասնչորսից տասնութ տարեկան սովորողի կողմից «Քվանտ» վարժարանի մեկ այլ սովորողի կամ աշխատողի նկատմամբ դիտավորությամբ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու, այլ քրեածին արարք կատարելու կամ խուլիգանական դրդումներով մանկավարժների պաշտոնական պարտականությունների կատարմանը բացառիկ ցինիզմով խոչընդոտելու համար ենթակա է քրեական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
58. Եթե վարժարանի սովորողը կամ նրա ծնողը չի պահպանել պայմանագրային դրույթները, կամ սովորողը չի ապահովել վարժարանի հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակությանն ու ծավալի յուրացմանը ներկայացվող նվազագույն պահանջները, ապա վարժարանը կարող է միակողմանի լուծել պայմանագիրը՝ այդ մասին տասն օր առաջ տեղյակ պահելով ծնողին:
59. Ուսումնական պարապմունքներից սովորողի հաճախակի անհարգելի բացակայության համար պատասխանատվություն է կրում ծնողը՝ օրենքով սահմանված կարգով:
60. Սովորողների համար Հիմնադրի, Նախարարության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, վարժարանի, ինչպես նաև սոցիալական գործընկերների, կազմակերպությունների, անհատների կողմից կարող են սահմանվել բարոյական և նյութական խրախուսման ձևեր՝ շնորհակալագիր, գովասանագիր, դրամական և նյութական խրախուսում, նվերներ, կրթաթոշակներ և այլ:
61. Վարժարանի մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը, աշխատանքի ընդունման, ազատման կարգերը սահմանում է Հիմնադիրը՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության:
62. Վարժարանի աշխատակիցների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են աշխատանքային կանոնակարգով՝ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի:
63. Մանկավարժական աշխատողն իրավունք ունի՝
1) մասնակցելու վարժարանի կառավարմանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված կարգով,
2) ընտրելու և ընտրվելու վարժարանի համապատասխան պաշտոններում, ինչպես նաև կառավարման և խորհրդակցական համապատասխան մարմիններում,
3) մասնակցելու վարժարանի գործունեությանը վերաբերող հարցերի քննարկմանը և լուծմանը,
4) բողոքարկելու վարժարանի ղեկավար և խորհրդակցական մարմինների հրամանները, կարգադրությունները և որոշումները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
5) առաջարկներ ներկայացնելու առարկայական չափորոշիչների, ծրագրերի, դասագրքերի բարելավման վերաբերյալ,
6) ընտրելու և կիրառելու դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակ,
7) ընտրելու և օգտագործելու կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած դասագրքեր, ուսուցողական նյութեր, ձեռնարկներ, ինչպես նաև սովորողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների գնահատման մեթոդներ,

8) ունենալու կազմակերպական և նյութատեխնիկական պայմաններ մասնագիտական գործունեություն իրականացնելու համար,
9) հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան՝ մշակելու և իրականացնելու դասապլաններ, թեմատիկ միավորներ,
10) մասնակցելու վերապատրաստումների, գիտաժողովների, քննարկումների և լսումների,
11) դիմելու արտահերթ ատեստավորվելու կամ որակավորման համապատասխան տարակարգ ստանալու համար՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
12) օգտվելու վարժարանի գրադարանի, տեղեկատվական պահոցների ծառայություններից՝ ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան,
13) պաշտպանված լինելու սովորողների, մանկավարժական եւ այլ աշխատողների այնպիսի գործողություններից, որոնք նսեմացնում են իր մասնագիտական վարկանիշն ու արժանապատվությունը,
14) իր շահերի պաշտպանության նպատակով ստեղծելու կազմակերպություններ, արհմիություններ կամ անդամակցելու դրանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
15) օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Կանոնադրությամբ իրեն վերապահված իրավունքներից, լիազորություններից և խրախուսման ձևերից:
64. Մանկավարժական աշխատողը պարտավոր է՝
1) հարգել և պաշտպանել սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը,
2) նպաստել երեխայի կրթության իրավունքի իրացմանը՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կրթական կարիքների առանձնահատկությունները,
3) նպաստել վարժարանում սովորողների կողմից հանրակրթական (հիմնական և լրացուցիչ) ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշիչների ապահովման գործընթացին, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, իրականացնել հանրակրթական ծրագրերը,
4) ապահովել հանրակրթության պետական չափորոշիչով նախատեսված ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման առավել արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ,
5) հետևողականորեն կատարելագործել իր առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, իրականացնել ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ,
6) համագործակցել ծնողների հետ երեխաների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում,
7) համագործակցել գործընկերների հետ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով,
8) սովորողների մեջ ձևավորել պատշաճ վարքագիծ ու վարվելակերպ, դաստիարակել հայրենասիրություն,
9) սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական
ունակություններ,
10) պահպանել Կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները:
65.Վարժարանի աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները սահմանում է Հիմնադիրը՝ համաձայն ՀՀ օրենսդրության:
66. Վարժարանի մանկավարժական և վարչական աշխատողների մանկավարժական աշխատանքային ստաժը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
67. Սովորողի կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականությունը ոչ պատշաճ կատարելն կամ չկատարելը, եթե դրա հետևանքով

երեխայի առողջությանն անզգուշությամբ պատճառվել է միջին ծանրության վնաս այն անձի կողմից, ում վրա դրված են այդ պարտականությունները, ըստ ծառայության կրում են պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:
68. Մանկավարժական աշխատողների համար Հիմնադրի, Նախարարության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, վարժարանի, ինչպես նաև սոցիալական գործընկերների, կազմակերպությունների, անհատների կողմից կարող են սահմանվել բարոյական և նյութական խրախուսման ձևեր՝ շնորհակալագիր, գովասանագիր, դրամական խրախուսում կամ այլ ձևեր՝ հիմնադրի որոշմամբ:
69. Սովորողի ծնողն (օրինական ներկայացուցիչը) իրավունք ունի՝
1) համագործակցելու վարժարանի մանկավարժական աշխատողների հետ իր երեխայի կրթության կազմակերպման հարցերով,
2) մասնակցելու հանրակրթական ծրագրերի իրականացման և դրանց արդյունավետության գնահատման գործընթացին,
3) պաշտպանելու իր եւ իր երեխայի օրինական շահերը համապատասխան մարմիններում.
4) մասնակցելու վարժարանի ներքին գնահատմանը,
5) մասնակցելու վարժարանի կառավարմանը ծնողական ժողովների և ծնողական խորհրդի միջոցով,
6) օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:
70. Սովորողի ծնողի պարտավորությունները սահմանվում են վարժարանի ներքին իրավական ակտերով՝ համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի:
Սովորողի ծնողը պարտավոր է՝
1) երեխայի համար ընտանիքում ապահովել համապատասխան պայմաններ կրթություն ստանալու համար,
2) մշտապես հոգալ երեխայի ֆիզիկական առողջության և հոգեկան վիճակի մասին, ստեղծել համապատասխան պայմաններ երեխայի հակումների և ընդունակությունների զարգացման, կրթական կարիքների բավարարման համար,
3) հարգել երեխայի արժանապատվությունը, դաստիարակել աշխատասիրություն, բարություն, ընկերասիրություն, հանդուրժողականություն, հարգալից վերաբերմունք ընտանիքի, մեծահասակների, պետական և մայրենի լեզվի, ժողովրդական ավանդույթների և սովորույթների նկատմամբ,
4) դաստիարակել հարգանք ազգային, պատմական, մշակութային արժեքների և հայրենիքի նկատմամբ, հոգատար վերաբերմունք պատմամշակութային հարստության և շրջակա միջավայրի նկատմամբ, հանդուրժողական վերաբերմունք այլ ժողովուրդների և մշակույթների նկատմամբ,
5) դաստիարակել հարգանք վարժարանի և մանկավարժական աշխատողների նկատմամբ,
6) հատուցել իր, ինչպես նաև իր երեխայի կողմից ուսումնական հաստատությանը հասցված վնասը,
7) սովորողին զերծ պահել ծխախոտ, ոգելից խմիչքներ, հոգեմետ նյութեր, զենք, զինամթերք, թունավոր, պայթուցիկ, ինչպես նաև օրենքով և վարժարանի ներքին իրավական ակտերով արգելված այլ նյութեր օգտագործելուց:
71. Ծնողի (օրինական ներկայացուցիչի) կողմից երեխայի դաստիարակության պարտականությունը, ոչ պատշաճ կատարելը կամ չկատարելը, խաբեության կամ այլ եղանակով քրեածին հանցանքի կատարմանը ներգրավելը, խուլիգանության դրդելը, որը զուգորդվել է երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքով առաջացնում է քրեական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:

VII. «ՔՎԱՆՏ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

72. Վարժարանի սեփականությունը ձևավորվում է վարժարանի հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև վարժարանի գործունեության արդյունքում ստացած, արտադրված և ձեռք բերված ոչ նյութական միջոցներից և գույքից:
73. Վարժարանն իրավունք ունի օրենքին, Հիմնադրի որոշումներին և (կամ) Կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
74. Վարժարանը կրում է իր սեփականության պահպանման հոգսը: Վարժարանի սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:
75. Վարժարանն իրավունք ունի իրեն ամրագրված գույքը Հիմնադրի համաձայնությամբ հանձնելու վարձակալության կամ անհատույց օգտագործման: Ամրագրված գույքի օգտագործման արդյունքում վարժարանի ստացած եկամուտները նրա սեփականությունն են:
76. Վարժարանին ամրագրված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները Հիմնադրի սեփականությունն են:
77. Վարժարանը ֆինանսավորում է Հիմնադիրը: Վարժարանի ֆինանսական միջոցները գոյանում են սովորողների ուսման վարձերից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:
78. Վարժարանը կարող է նաև օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ ֆինանսավորում պետական բյուջեից:
79. Վարժարանը կարող է մրցութային հիմունքներով պետական բյուջեից ստանալ լրացուցիչ ֆինանսավորում հետևյալ նպատակներով.
1) իրականացնել լրացուցիչ կրթական ծրագրեր արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների համար,
2) իրականացնել ուսումնամեթոդական գիտափորձ և (կամ) այլընտրանքային ծրագիր,
3) կազմակերպել դպրոցականների միջազգային օլիմպիադաների նախապատրաստական հավաքներ և դասընթացներ,
4) ստեղծել ուսումնամեթոդական ձեռնարկներ և ուսումնական նյութեր (այդ թվում՝ էլեկտրոնային):
Վարժարանը կարող է մրցութային հիմունքներով պետական բյուջեից ՀՀ ԿԳ նախարարության առաջարկությամբ ստանալ լրացուցիչ ֆինանսավորում նաև օրենսդրությամբ սահմանված այլ նպատակներով:
80. Վարժարանի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝
1) Հիմնադրի սահմանած կարգով վճարովի լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցումից ստացված միջոցները,
2) բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները,
3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված գործունեությունից ստացված միջոցները:
81. Հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացման նկատմամբ կիրառվում է օրենքով սահմանված հարկային արտոնությունների համակարգ:
82. Պետությունը ուսումնական հաստատություններին, անկախ կազմակերպական-իրավական ձևից, երաշխավորում է գործունեության հավասար իրավական դաշտ՝ կանոնադրությամբ նախատեսված հանրակրթական գործունեության մասով:

VIII. «ՔՎԱՆՏ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

83. Վարժարանը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Հավելված 1

«Քվանտ» վարժարանի կանոնադրության

Միջազգային բակալավրիատի գնահատման 7 միավորյան համակարգից ՀՀ-ում օգտագործվող գնահատման 10 կամ 20 միավորյան համակարգի համապատասխանության աղյուսակ

Գնահատման միջազգային համակարգ	ՀՀ–ում գործող գնահատման համակարգ – (10 միավորով)	ՀՀ–ում գործող գնահատման համակարգ – (20 միավորով)
7	10	20
6	9	18
5	8	16
4	7	14
3	6	12
2	4	8
0 կամ 1	1-3	8-ից ցածր

«Քվանտ» վարժարանի տնօրեն՝ Ռ.Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
КОММЕРЧЕСКОЕ ПРЕДСТАВИТЕЛЬСТВО РА
ЕРЕВАН УЧЕБНО-НАУЧНЫЙ ПРОИЗВОДСТВЕННЫЙ ЦЕНТР
YEREVAN EDUCATIONAL SCIENTIFIC PRODUCTION CENTER
«ՔՎԱՆՏ»
"КВАНТ"
"QUANTUM"
02206356

Կարգավիճակ 5
գրասենյակ
5ք/կ